Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ-ի EduArmenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝Ինչպե՞ս վարքային խանգարում ունեցող աշակերտներին ինտեգրել դասապրոցեսին

Հետազոտող ուսուցիչ՝ Մերի Այվազյան

Հրազդանի Վ. Սարոյանի անվան հ 11 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3
Վարքային խնդիր ունեցող աշակերտը դժվար է ինտեգրվում դասապրոցեսին……4
Խնդրի շուրջ կատարել ուսումնասիրություններ……..5
Եզրակացություն……14
Օգտագործված գրականության ցանկ……..15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բոլոր աշակերտներին որակյալ կրթության տրամադրումը լուրջ մարտահրավեր է ուսուցիչների համար: Կրտսեր դպրոցական տարիքը ամենակարևոր շրջանն է անձի կայացման և զարգացման համար:

Երեխաների դժվարությունները կրթության մեջ կարող են շատ տարբեր լինել. օրինակ մեկը կարող է արագ կարդալ, ակտիվ լինել, մյուսը ոչ, կարող են կրթական ոլորտում դժվարությունների հանգեցնել նաև վարքային խանգարումները:

Յուրաքանչյուր երեխայի վարքագծի ձևավորումը նկատվում է տարբեր ձևերով: Երեխայի ճիշտ վարքի ձևավորման գործում շատ մեծ նշանակություն ունի ընտանիքի դերը: Ճիշտ վարքի դրսևորման առաջին պայմանը համերաշխ ընտանիքի առկայությունն է :

Վարքային խանգարում ունեցող աշակերտները սովորաբար դժվար են ինտեգրվում դասարանին և դասապրոցեսին, այդ իսկ պատճառով պետք է մշակել մեթոդներ, հնարներ նման աշակերտներին արագ և հեշտ ինտեգրել դասապրոցեսին:

ՆՊԱՏԱԿԸ՝

Վարքային խանագարումներ ունեցող աշակերտի ինտեգրումը դասապրոցեսին:

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- Վերլուծել տվյալ խնդրի վերաբերյալ տարբեր տեսական մոտեցումներ, մեկնաբանություններ:
- Ո՞րն է պատճառը, որ աշակերտը դրսևորում է ագրեսիվ պահվածք դասապրոցեսին:
- Ինչպե՞ս նրան ինտեգրել դասապրոցեսին և դասարանին:

Խնդրին լուծում տալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել, թեմայի վերաբերյալ տեսություն:Շատ կարևոր է դառնալ նրա ընկերը:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Երեխայի անցանկանալի վարքը կարող է խնդիր առաջացնել շրջապատի համար:

Երեխայի հակադրվող վարքը, սեփական վարքի վերահսկման հետ կատարված դժվարությունները կարող են դիտարկվել որպես վարքային լուրջ խնդիրներ:

Այսպիսով՝ երեխայի վարքի մեծահասակի համար հաճախ դժվար կառավարելի դրսևորումները, զգացմունքներն ու հույզերը արտահայտելու և կառավարելու միջոցներից մեկն է երեխաների համար, և նրանք փորձում են այլ կերպ հասկանալ այն, ինչ իրենց շուրջն է կատարվում:

Թե՛ նախադպրոցական, թե՛ ավելի մեծ տարիքի երեխաների համար կարող են լինել բացասական վարքի դրսևորում հրահրող իրավիճակներ կամ գործոններ:

ԳԼՈՒԽ 1

Ագրեսիվ վարքագծի պատճառները

Ագրեսիվ վարքագծի պատճառ կարող են հանդիսանալ՝

- Ինտելեկտի ոչ բավարար զարգացման մակարդակը
- Ցածր ինքնագնահատականը
- Ինքնավերահսկման ցածր մակարդակը
- Հաղորդակցման հմտությունների զարգացման ցածր մակարդակը

●Նյարդային համակարգի գրգռվածությունը

Երեխաները, որպես կանոն, վարքի մոդելները յուրացնում են երեք հիմնական աղբյուրներից՝

1. ***Ընտանիք***: Այստեղ միաժամանակ կարող է լինել և՛ ագրեսիվ վարքի ցուցադրում, և՛ դրա ամրապնդում:

2. ***Հասակակիցների միջավայր:*** Ագրեսիվ վարքաձևը երեխաների կողմից հաճախ յուրացվում է հասակակիցների հետ համագործակցության ընթացքում:

3. ***Հեռուստատեսություն, համացանց:*** Գաղտնիք չէ, որ հեռուստաեթերներում, համակարգչային խաղերում բռնության տեսարանները բացասաբար են ազդում երեխաների վրա:

Մի քանի օրինակ բերեմ իմ փորձից. նախ պետք է հասկանալ նրա վատ վարքի պատճառը, քանզի առանց դա պարզելու, թե դպրոց մտնելով ինչու՞ է երեխան նման պահվածք ցուցաբերում չենք կարող արդյունքի հասնել:

Առաջին աշխատանքս որ եղավ դարձա նրա ընկերը, որ նա վստահի ինձ:Աստիճանաբար մեթոդներ մշակելով, որոշ աշխականքներ տանելով՝ հասա ցանկալի արդյունքի:

.Մասնագետների հետ խորհրդատվություն

. Աշակերտների հետ զրույցներ

.Կարևորել նրա աշխատանքը

Նա տարրական դպրոցն ավարտեց բոլորովին ուրիշ աշակերտ, նրա վարքում նկատվեցին դրական շատ փոփոխություններ և ամենակարևորը ես դարձա նրա ընկերը:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ԿՕԳՆԵՆ ՎԱՐՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼԻՍ

Ցանկացած արտասովոր վարքագիծ, որը գերազանցում է տվյալ տարիքին և զարգացման մակարդակին բնորոշ վարքային դրսևորումների հետ կատարված է մեր սպասումները և բարդացնում են շրջապատող աշխարհի ու մարդկանց հետ երեխայի փոխարաբերությունները, հաճախ բնութագրվում են որպես «հանդուգն վարք»:

Պարզել վարքային շեղումների սկզբնաղբյուրը

Երեխաներին օգնել կարողանալու համար, նախ պետք է պարզել ինչու և ինչպես են նրանց մոտ առաջացել վարքային շեղումներ: Նման դեպքում անհրաժեշտ է գնահատել երեխայի պահվածքը: Պարզել մեզ համար անհանգստացնող խնդիրը, այնուհետև ընթացք տալ այդ հարցին:

Շատ կարևոր է բացառել երեխայի նկատմամբ բռնությունը. տանը, հասարակության մեջ:

Անկախ նրանից, թե մենք երեխայի հետ կարողանում ենք շփվել թե ոչ, պետք է ցույց տալ, որ սիրում և աջակցում ենք նրան: Դժվար պահերին նրա հետ ենք, ոչ թե միայնակ ենք թողել նրան:

Ծնողը միշտ ջանքեր է գործադրում իր երեխայի մեջ լավ վարք դրսևորելու համար: Հենց երեխան լավ վարք դրսևորի, նա կհիշի դա ամբողջ կյանքի ընթացքում:

Դա նրան կօգնի նաև դասարանում դասընկերների հետ փոխհարաբերությունների ընթացքում:

Լավ վարքի դրսևորման դաստիարակումը սկսվում է տանից, ընտանիքից, ծնողից:

Երեխայի մեջ լավ պահելաձևը ներշնչելու համար, նախ պետք է ծնողը ինքը օրինակ դառնա երեխային; Պետք է երեխային սովորեցնել քաղաքավարի արտահայտություններ՝

- Խնդրում եմ
- Շնորհակալություն
- Կներեք

Եթե ցանկանում եք, որպեսզի երեխայի սխալն ուղղվի, ապա պետք է համբերատար հասկացնել նրան ճիշտը, այլ ոչ թե նախատել նրան դրա համար, որպեսզի երեխան ինքը հասկանա իր սխալը և դրա հետևանքը, և կատարի դրանից հետևություններ՝ հաջորդ անգամ չկրկնելու համար:

Կոնֆլիկտի տեսակները

- Կոնֆլիտ աշակերտների միջև
- Կոնֆլիկտ ուսուցչի և աշակերտի միջև
- Կոնֆլիկտ ուսուցչի և աշակերտի ծնողի միջև

«Վարքի խանգարումները» սահմանվում են որպես երեխաների մոտ վարքային և հուզական խնդիրների բարդացած վիճակ: Այս խանգարումներով երեխաները և դեռահասները մեծ դժվարություններ ունեն ինտեգրվել հասարակությանը:

Վարքային խնդիրներով երեխաները կամ դեռահասները կարող են ցուցաբերել հետևյալ տիպի վարքագծեր՝

- Կռվում է, սպառնում կամ ահաբեկում է մյուսներին
- Հաճախ ինքն է սկսում ֆիզիկական կռիվներ

Կան մի շարք պատճառներ, որոնք կարող են կապ ունենալ վարքի խանգարումների համար, ինչպիսիք են ուղեղի վնասվածք, բռնություն ցուցաբերել երեխայի նկատմամբ, աճի և զարգացման խախտումներ, նրա անհաջողությունները դպրոցում, կյանքում, բացասական մթնոլորտ ընտանիքում կամ հասարակության մեջ:

Երեխայի «վատ» վարքը շրջապատի մոտ բացասական հակազդեցություն է ունենում, և դա կարող է պատճառ հանդիսանալ «վատ» պահել իրեն: Հաճախ ծնողները կարիք են ունենում դիմել մասնագետներին, որպեսզի օգնեն իրենց: Երեխաներին օգնել կարողանալու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչու և ինչպես են նրանց մոտ զարգանում էմոցիոնալ խանգարումներ և վարքի շեղումներ: Կարևոր է նաև պարզել այս երեխաների

բնորոշ առանձնահատկությունները: Նման դեպքում նախ՝ պետք է գնահատել երեխայի պահվածքը, պարզել մեզ հուզող խնդիրը, այնուհետև նոր միջամտել: Շատ կարևոր է շեշտը դնել վարքի դրսևորման պատճառի վրա:

Ո՞րն է պատճառը, որ աշակերտը դրսևորում է ագրեսիվ պահվածք:

Մենք ուսումնասիրեցինք, թե ի՞նչ է ագրեսիան և վարքային խանգարումները: Պետք է նախ ավելի մոտիկից ծանոթանալ երեխային, հասկանալ նրա ներաշխարհը: Նրան հասկացնել տալ, որ բացի ուսուցչից, այդ մարդը նաև նրա ընկերն է: Չպետք է էլ ավելի խորացնել ագրեսիվությունը: Հետո խոսել համապատասխան մասնագետների հետ՝ հոգեբան, սոցմանկավարժ: Պարզելու, թե ինչպես կարող են օգնել տվյալ իրավիճակում: Եթե աշակերտը դրսևորում է նման վարքային պահվածք, ապա նա ինտեգրված չէ դասապրոցեսին: Հարկավոր է շատ համբերատար լինել՝ արդյունքի հասնելու համար: Անհրաժեշտ է ուսումնասիրել երեխայի ընտանեկան վիճակը, զրուցել ծնողների հետ՝ պարզելու, արդյոք ընտանիքում էլ է դրսևորվում նման պահվածք: Զրույց տանել դասարանի հետ, որպեսզի նրանք խիստ չդատեն իրավիճակը, այլ ընդհակառակը , իրենք նունպես ներգրավված լինեն այդ աշխատանքի մեջ, որպեսզի միասին հասնենք ցանկալի արդյունքի: Պետք է աշակերտներին ուղղորդել, որպեսզի տվյալ աշակերտի հետ ավելի շատ ժամանակ անցկացնեն, պարզեն նրա նախասիրությունները, օգնեն նրան ինչպես կարող են:

Պետք է երեխային ցույց տալ, որ նա առաջին անգամ մուտք գործելով դպրոց, այնտեղ իր համար մի նոր, հետաքրքիր աշխարհ է բացվում: Երեխան չպետք է այդ միջավայրում իրեն միայնակ զգա, և դա կարող է պատճառ դառնալ նրա վարքային խանգարմանը, նրա մոտ ագրեսիա առաջանա և նա ինտեգրված չլինի դասապրոցեսին:

Կարևոր է նաև պարզել այս երեխաների բնորոշ առանձնահատկությունները: Նման դեպքում նախ՝ պետք է գնահատել երեխայի պահվածքը, պարզել մեզ հուզող խնդիրը, այնուհետև նոր միջամտել: Շատ կարևոր է շեշտը դնել վարքի դրսևորման պատճառի վրա:

Նոր վարքի ձևավորման ժամանակ կիրառում են մասնագիտական տեսանկյունից տարբեր մեթոդներ.

Խթանում: Իրադարձություն, որը վարքագծի արձագանք է առաջացնում՝ օրինակ աշակերրտը նոր է եկել դպրոց և չի հարմարվում միջավայրին և ցուցաբերում է ագրեսիվ պահվածք:

Ամրապնդում: Մի շարք պայմաններ, որոնք հետևում են պատասխանին և մեծացնում կամ նվազեցնում են պատասխանի հավանականությունը. օրինակ՝ մշակել մի մեթոդ՝ հասկանալու ագրեսիվության նվազեցման համար:

Վարքագծի ձևավորում: Մշակել նոր վարք՝ հետևողականորեն հետևելով ուսումնառության նպատակներին:

Մենք օգտագործում ենք «կրթական» ճնշում, երբ ագրեսիան դիտվում է որպես սոցիալական չարիք: Միևնույն ժամանակ, ցանկացած, նույնիսկ միանգամայն արդարացված դժգոհություն, ենթակա է պատժի:

Դպրոցում դժվար, խնդրահարույց բնավորությամբ դեպրեսիայից տառապող, աճող դյուրագրգռություն և հակազդեցություն դրսևորող երեխան հանդիպում է թյուրիմացության, «սոցիալական հակահարվածի», նրան վերաբերվում են որպես կռվարարի: Այդ պարագայում, եթե անտեսենք նրա ճշմարիտ խոսքը, ապա արդյունքում անհատի հիմքում ընկած խնդիրները, ագրեսիայի իրական պատճառները չեն բացահայտվում և դեռևս ունեն իրենց ազդեցությունը:

Պետք է ընդունել, որ հոգեբույժին դիմելը «վերջին փաստարկն» է: Դրան դիմում են ամենածայրահեղ դեպքերում, երբ երեխան կամ դեռահասը կատարում է սադիստական գործողություններ, կոտրում է կահույքը, մարմնական վնասվածքներ պատճառում և այլն:

Վերջին տարիներին մանկապարտեզների, դպրոցի ուսուցիչները նկատում են երեխաների ագրեսիվություն մակարդակի բարձրացման միտում:

Ծնողների հետ զրույցներից կարելի է նաև եզրակացնել, որ երեխաներն այժմ ավելի ագրեսիվ են, քան նախկինում: Նրանց հետ դժվար է վարվել և հաճախ դաժան են:

ԳԼՈՒԽ 2

Ինչպիսի՞ն պետք է լինի մոտեցումն այս խնդրին

Ինչպիսի՞ ճիշտ լուծում տալ, որպեսզի երեխան չտուժի, միաժամանակ մյուս աշակերտները, չէ՞ որ տեղի է ունենալու դասապրոցեսի խանգարում: Շատ սխալներ առաջանում են ագրեսիվ վարքի սխալ մեկնաբանման պատճառով:

Չպետք է խուճապի մատնվենք, երբ բախվենք երեխայի սխալ պահվածքի հետ:

Պետք է մանկավարժահոգեբանական թիմի հետ աշխատանքի արդյունքից կանգնել ճիշտ ուղղու վրա:

Համարվում է, որ «հին» և «նոր» բարոյական նորմերի վերաբերյալ պետք է ձևավորեն բարոյականության ամուր հիմք: Երեխաներին պետք է սովորեցնել այս կանոնները, իսկ հետո նրանք կապրեն առանց օրենքը խախտելու:

Այսպիսով, երեխաների վարքագիծը, որը դրսևորում է գրգռվածություն, անզուսպ, կոպտություն, հակառակություն, մեծերի նկատմամբ անհարգալից վերաբերմունք, դիտվում է որպես վատ կրթության, հասակակիցների վատ ազդեցության, ագրեսիվ բովանդակության գրքերի և ֆիլմերի և այլն:

Շատ հաճախ երեխաները կարող են ինքնուրույն լուծել կոնֆլիկտային իրավիճակը՝ առանց մեծահասակների օգնության: Եթե ուսուցչի միջամտությունն անհրաժեշտ է, ապա դա կարևոր է անել հանգիստ ձևով: Ավելի լավ է անել առանց երեխայի վրա ճնշում գործադրելու, առանց հրապարակային ներողությունների՝ սահմանափակելով իրեն ակնարկով: Շատ ավելի արդյունավետ կլինի, եթե ինքը գտնի այդ խնդրի լուծումը: Կառուցողական կոնֆլիկտը երեխայի փորձին կավելացնի սոցիալական հմտություններ, որոնք կօգնեն նրան շփվել հասակակիցների հետ, կսովորեցնեն լուծել խնդիրները: Կոնֆլիկտային իրավիճակի լուծումից հետո կարևոր է ուսուցչի և երեխայի երկխոսությունը:

Օրինակ՝ տղան առաջին դասարան եկավ իր հասակակիցների հետ, որոնց ճանաչում է մանկապարտեզի խմբից: Նա ոչ մի կերպ չէր կարողանում վարժվել դպրոցական առօրյային: Դասին նա կարող էր կողքի ընկերոջ հետ կոնֆլիկտի մեջ մտնել և այդպես խանգարել դասապրոցեսը: Ի պատասխան ուսուցչի դիտողությունների՝ նա կոպիտ է արտահայտվել: Տղաները նրան ասել են, որ ինքը խանգարում է, իրենք են մեկնաբանություններ արել, ինչին նա չի արձագանքել: Արդյունքում՝ համախմբվել են նրա դեմ, դադարեցրել են նրա հետ շփվել ու ընդմիջումներին խաղալ: Միայն ժամանակին և իմաստուն միջամտությունը օգնեց լուծել հակամարտությունը:

Երեխայի վարքագիծն ամեն գնով «լավին» արագ փոխելու ցանկությունը կապված է ագրեսիվության շատ մակերեսային մեկնաբանության հետ:

Վերջինս ներկայացվում է որպես զուտ բացասական երևույթ: Դա ըստ ծնողների, ուսուցիչների, խանգարում է անհատականության ճիշտ ձևավորմանը և պետք է դադարեցնել խիստ դաստիարակություն, պատիժներ, արգելքներ և այլն: Երեխայի կյանքի գիծը ուղղվում է ծնողական հայացքներին համապատասխան:

Ինչպե՞ս աշակերտներին ինտեգրել դասապրոցեսին:

Վարքային խանգարում ունեցող աշակերտների կրթության հասանելիությունը ապահովելու համար ուսուցիչներին անհրաժեշտ է կիրառել մի շարք ռազմավարություններ՝

- Չպետք է աշակերտին շատ ծանրաբեռնել ուսումնական նյութերով, նրանց միջև մրցակցություն չստեղծել:
- Անհրաժեշտ է ձեռք բերել երեխայի վստահությունը, դառնալ նրա ընկերը, որպեսզի կարողանանք օգնել նրան:
- Հստակ պետք է ձևակերպենք կանոնները, աշակերտները սիրում են, երբ նախապես տրվում են կանոններ և դրանք կազմվում են իրենց հետ:
- Աշակերտների կողմից սահմանվեն պատժի կանոնները իրենց աշխատանքը չկատարելու համար՝ այդ թվում նաև վարքային խանգարում ունեցող աշակերտները նույնպես:
- Ձևավորենք վարքային խանգարում ունեցողների հետ, հետաքրքրվենք նրանց նախասիրություններով՝ դրանցով ցույց տալով, որ իրենք նույնքան կարևոր են, որքան և մյուս սովորողները:

●Անհրաժեշտ է նրանց ներգրավել նրանց թիմային աշխատանքների մեջ:

●Վարքային խնդիր ունեցող երեխաներին նստեցնել ուսուցչի սեղանին հնարավորինս մոտ:

●Պետք է անտեսել վարքագիծը, բայց ոչ երեխային:

●Չպետք է երեխաներին համեմատել միմյանց հետ՝ հատկապես վարքային խնդիր ունեցող աշակերտներին, չէ որ նրանք տարբեր են:Այս օրինակներով կարող ենք կիսվել մեր գործընկերների հետ,որպեսզի նրանք նույնպես արդյունքի հասնեն:

Վատ վարքի պատճառ կարող է հանդիսանալ նաև ուշադրության պակասը: Այդ երեխաների մոտ ուշադրությունը գրավելու ցանկություն է լինում և դա նրանք ցույց են տալիս ագրեսիվ պահվածքով: Եթե երեխան ագրեսիվ վարք է ցուցաբերում ուշադրություն ձեռք բերելու համար, ապա կարելի է նրան բացատրել, որ դրան կարելի է արժանանալ ավելի դրական միջոցներով:

Շատ կարևոր է նաև պարզելու վարքային խանգարման սկզբնաղբյուրը՝ այսինքն երեխան տանը, շրջապատում նման վարքագիծ է դրսևորում, թե՞ միայն դպրոցում: Եթե երեխայի մոտ ախտորոշված վարքային խանգարում է, ապա հավանականությունը բավականին խիստ է խանգարելու դպրոցական կատարմանը կամ ընկերների հետ հարաբերություններին:

Անհրաժեշտ է օգնել նման երեխաներին դուրս գալ այդ վիճակից, որպեսզի նա իրեն զգա հասարակության լիարժեք անդամ: Երբեք չպետք է ցույց տալ նրան, որ նա ունի նման խնդիր, այլապես մենք երբեք հաջողության չենք հասնի: Սովորաբար վարքային խնդիր ունեցող երեխան դժկամությամբ է դպրոց հաճախում՝ մտածելով, որ այնտեղ իր այդ խնդրին կվերաբերվեն շատ բացասական: Ուսուցիչը առաջինը նրա համար պետք է լինի ընկեր, հետո նոր ուսուցիչ, որպեսզի ավելի հեշտ կանխի դրա խորացմանը:

Վարքագծի խանգարումն ավելի հաճախ հանդիպում է տղաների, քան աղջիկների մոտ: Այն նաև ավելի հավանական է զարգանա այն երեխաների մոտ, ովքեր գալիս են տներից, որոնք.

- Անբարենպաստ են
- Դիսֆունկցիոնալ
- Անկազմակերպ

Կրտսեր դպրոցական տարիքը համարվում է երեխայի կյանքի նոր և շատ կարևոր փուլ: Նրանց համար մի նոր աշխարհ է բացվում: Երեխաներն ընդունվում են դպրոց, ինչն իր հետ բերում է մի շարք դժվարություններ, որոնք պետք է հաղթահարել ինքնուրույն: Նրանց համար բարդ ժամանակաշրջան է սկսվում: Նրանք պետք է հետևեն դպրոցական կարգ ու կանոնին, լսեն ուսուցչի խոսքը, զսպեն իրենց բարձրաձայն չարտահայտել իրենց զգացմունքներն ու մտքերը:

Նրանք պետք է շփման մեջ մտնեն հասակակիցների և մանկավարժների հետ հաղորդակցման կարիք ունեն, բայց այդ ամենը պետք է անել կարգուկանոնով: Մասնավորապես, երեխաները պարբերաբար խախտում են կանոնները, չեն ենթարկվում ներքին կանոնակարգին և մեծահասակների պահանջներին, կոպիտ են, խանգարում են դասը կամ խմբային պարապմունքները: Շատ դեպքերում այս ամենը հանգեցնում է վարքային խանգարումների: Այլ դեպքերում վարքային խանգարումները կրտսեր դպրոցական տարիքում հանդիսանում են երեխայի՝ դպրոցական կյանքին անբավարար պատասխանի հետևանք, մեծահասակների կամ տարեկիցների հետ փոխհարաբերության արդյունք: Այս երեխաների վարքն արտահայտվում է անվճռականությաբ, պասիվությամբ, կամակորությամբ, ագրեսիվությամբ: Այնպիսի տպավորություն է, կարծես նման վարքագիծ դրսևորող երեխաները հատուկ են խանգարում կարգուկանոնը: Սակայն դա այդպես չէ: Իրականում երեխան ի վիճակի չէ կառավարել սեփական անհանգստությունները: Վերջիններս տանում են վարքային խանգարումների, մեծահասակների և տարեկիցների հետ կոնֆլիկտների առաջացման: Վարքի խանգարումը սովորաբար հանդիպում է փոքր տարիքի երեխաների մոտ: Վարքային խանգարումները բերում են ագրեսիվ պահվածքի: Ագրեսիվությունն արտահայտվում է ոչ միայն ֆիզիկական գործողություններով. Որոշ երեխաներ հակված են խոսքային ագրեսիվության՝ վիրավորում են, կշտամբում, բարկացնում: Մանկական վարքը բնորոշ է այն երեխաներին, որոնց վարքագծում պահպանվում են ավելի վաղ տարիքի երեխաների վարքին բնորոշ հատկանիշներ: Օրինակ, կրտսեր դպրոցական տարիքի երեխայի մոտ դեռևս առաջատարը խաղն է: Այս երեխաները դասի ժամանակ չեն կենտրոնանում, հեռանում են ուսումնական գործընթացից:

Իմ փորձից ասեմ,որ տվյալ աշակերտը չէր կարողանում կենտրոնանալ դասապրոցեսին, քանի որ դեռ չէր ինտեգրվել դասարանին:Հետո աստիճանաբար, հաղթահարեց բոլոր դժվարությունները:Սկսեց իր դասընկերների հետ մտերմություն անել, դասընկերները օգնում էին նրան ցանկացած հարցում:

Փորձերը ցույց են տվել, որ խնդրին ավելի լուրջ մոտենալու դեպքում ցանկալի արդյունքի կարող ենք հասնել՝

- Ճանաչել երեխային, դառնալ նրա ընկերը:
- Պարզել, ինչ նախասիրություններ ունի:
- Նրան պահել ուշադրության կենտրոնում, որպեսզի իրեն անտեսված չզգա:
- Կապ պահել համապատասխան մասնագետների հետ:
- Եվ ամենակարևորը իր դասընկերների շնորհիվ արագ ինտեգրվի դասարանին և դասապրոցեսին:

Շատ կարևոր է նաև տվյալ աշակերտին միշտ պահել ուշադրության կենտ-
րոնում:Միանշանակ չպետք է զգացնել տալ,որ նա ունի որոշակի խնդիրներ,
նա դա չպետք է զգա:

Համատեղ ուժերով պետք է հաղթահարել խնդիրը:

Ինչ էլ որ լինի երեխայի ագրեսիայի պատճառը, նա, ամենայն հավանականությամբ, կհաղթահարի այն, քանի որ ավելի հմտանում է իր խնդիրները լուծելու համար ոչ թե այլ բառեր օգտագործելու մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ մեր այս բոլոր ուսումնասիրություններից եկանք այն եզրահանգման, որ հատկապես կրտսեր դպրոցում, երբ երեխան առաջին անգամ ոտք է դնում դպրոց, ուսուցիչը պետք է լինի նրա ավագ ընկերը, մտերիմը և հենարանը:

Երեխաները տարբեր են և կարող են իրենց դրսևորել տարբեր ձև: Ուսուցիչը պետք է այդ ամենին պատրաստված լինի նաև հոգեբանորեն:

Կրտսեր դպրոցականները շատ նուրբ և փխրուն էակներ են, և նրանց հետ շփումը պետք է լինի շատ մեղմ, զգույշ, հասկանալ նրանց և ոչ թե կոպտել:

Առաջինը երեխային ճանաչել հոգեբանորեն, հետո նոր տալ նրան կրթական մեծ բազա:

Շատ կարևոր է աշխատել նաև մասնագետների հետ, քանի որ այս խնդրին պետք է մոտենալ նաև մասնագիտորեն:

Մենք բախվեցինք մի խնդրի, որին գտանք լուծում:Լուծումը եղավ խնդրին տարբեր տեսանկյունից դիտելը, ուստի առանց ուսումնասիրությունների չես կարող հասնել ցանկալի արդյունքի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Можгинский Ю. Б. ,,Агрессивность детей и подростков''.
2. Шпильрейн С. Н. ,,Психоаналитические концепции агрессивности,,.
3. Алфимова М. В., Трубников В. И.
4. Խանամիրյան Ի.Ռ., Գևորգյան Դ. Է. «Երեխան և հոգետրավման»
5. Գ.Ս. Բաբախանյան «Վարքի խանգարման առանձնահատկություն-ները»:
6. Л.С. Выготский , А.С. Макаренко, В. А. Сухомлинский-
Մանկավարժություն